ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի պարզ լճի փողոց 26 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսումների*

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք ՀՕ-150-Ն, խմբ. 3.05.24թ.) և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ 2025թ. մայիսի 7-ին ժամը 12:00-ին՝ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանում (ք.Դիլիջան, Մյասնիկյան փ. 2 55) տեղի է ունենում քաղաքացի Երեմ Գրիգորյանի կողմից փորձաքննության ներկայացված ք. Դիլիջան, Պարզ լճի փողոց 26 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 2-րդ հանրային լսումը: Հանդիպմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի, նախաձեռնող կողմի, Դիլիջանի համայնքապետարանի աշխատակիցները, ինչպես նաև շահառու համայնքի ներկայացուցիչները (բնակիչները):

Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Հ. **Ֆրունզիկյանը** ողջունեց ներկաներին և ներկայացավ:

Հ. **Ֆրունզիկյանը** ներկայացրեց հանդիպման նպատակը, այնուհետև հայտնեց, որ Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «ա». ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է փորձաքննության: Գնահատման հաշվետվությունը ուղղարկվել է տարբեր նախարարություններ և շրջակա միջավայրի մասնագիտական ստորաբաժանումներ որոնք իրենց առաջարկություններն ու դիտողություններն են ներկայացրել, փորձագետի կողմից փորձաքքնվել է և ուղղարկվել է լրամշակման, որը լրամշակվել է նախաձեռնողի կողմից: Այնուհետև ներկայացրեց նախատեսվող աշխատանքների կատարման ընթացքում շրջակա միջավայրի վրա հիմնական բացասական ազդեցությունները կապված փոշու արտանետումների հետ, վառելիքի արտանետումները շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ, և այլն:

Ներկայացնելուց հետո խոսքը փոխանցեց նախաձեռնող կողմի ներկայացուցչին և խնդրեցմանրամասն ներկայացնի նախատեսվող գործունեությունը: **Ներկայացուցիչը** ներկայացավ և ներկայացրեց բնակավայրում նախատեսվող աշխատանքները, ծավալները, ծանոթացրեց նախագծին և գործունեության իրականացման ընթացքում առաջացող ազդեցությունները շրջակա միջավայրի վրա, և դրանց նվազեցմանն միտված միջոցառումների շրջանակը, ինչպես նաև համայնքում սոցիալական ազդեցությունը և ստեղծվող աշխատատեղերը:

**Հ. Ֆրունզիկյանը** հարց բարձրացրեց գնահատման հաշվետվության թերի լրամշակման վերաբերյալ և ներկայացրեց այն կետերը որոնք թերի են լրամշակվել, և հավելեց որ պետք է իրականացվի ճշգրիտ լրամշակում:

**Նեկայացուցիչը** նշումներ կատարեց բաց թողնված կետերի վերաբերյալ և հավելեց որ առաջիկա 3 աշխատանքային օրվա ընթաքում կիրականացվի և կներկայացվի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ:

**Հ. Ֆրունզիկյանը** հետաքրքրվեց նախատեսվող գործունեության տարածքում հատվող ծառատեսակների և քանակների վերաբերյալ և հավելեց որ գնահատման հաշվետվությամբ դա պետք է ներկայացվի:

**Նեկայացուցիչը** ընդունեց և ասաց տեղում կիրականացնենք գույքագրում, քանակաների և տեսակների վերաբերյալ, որը կներկայացվի գնահատման հաշվետվության համապատասխան բաժնում:

Այլ հարցեր չհնչեցին **Հ. Ֆրունզիկյանը** շնորհակալություն հայտնեց ներկաներին և ամփոփեց հանդիպումը:

«ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ֆրունզիկյան

Նախաձեռնողի ներկայացուցիչ՝ Գ.Գալստյան